

վկայություններ: Լրագրերը, խօսքերով առաջին տասն
գրքերը հասան (№ 155) ասում է. «Պատ-
մուհանքը հասարակ է, պարզ, գրաւիչ, մի և
նոյն ժամանակ կատարելապէս գիտնա-
կան և այս պատճառներով այդ գրքերը
արժանի են, որ ամենալայն կերպով տարածվեն
ընթերցող հասարակութեան մէջ, ոչ միայն ժո-
ղովրդի, այլ և ինտելիգենցիայի մէջ: Այստեղ
չէ կարելի մանրամասն խօսել բոլոր գրքերի
մասին, բայց անհրաժեշտ է մի քանի խօսք ա-
սել գոնէ նրանցից մի քանիսի մասին, այն է
№№ 4, 5 և 11 գրքերի մասին: № 4-ի և
5-ի մէջ, մանաւանդ № 5-ի մէջ («Մարդկանց
տնեւորութիւնը» բարեկամներն ու թշնամիները) հե-
ղինք փորձում է ծանօթացնել իր ընթերցող-
ներին աներևոյթ, բայց ընտրական երկոյթների
մէջ նկատելի դեր կատարող էակների հետ-
սուհիների, միկրոքների, բացիւնների աշխարհի
հետ: Մեզ յայտնի ամբողջ ժողովրդական գրա-
կանութեան մէջ այս հարցը կամ բոլորովին չէր
շոյափված կամ պատմված է այնքան անաղ-
և անշնորհ կերպով, որ Վ. Լուսկինի այդ
փորձը արդարաւոր կերպով պէտք է համարվի
առաջին անգամ այս բանի մէջ. հեղինակը,
մեր կարծիքով, փայլուն կերպով է գլուխ բե-
րել շատ և շատ դժուար գործը—տալ մի համա-
ռօտ, համարժէցող պատմութիւն մէջ
պարզ հասկացողութիւն ամբողջական աներևոյթ
բարեկամների և թշնամիների մասին: Մի և
նոյնը պէտք է ասել և № 11 գրքի վերաբեր-
մամբ, որի վերնագիրն է. «Ենչպէս է գնում
կեանքը մարդու մարմնի մէջ»: Այդտեղ հեղինակ-
ը այնպէս տաղանդաւոր կերպով, այնպէս
պարզ, համառօտ և հասկանալի կերպով պատ-
մել է մարդու ֆիզիոլոգիան, որ կատարելապէս
դժուար է աւելի լաւ սպասել:

Այսպիսի վկայութեան արժանացած գրքերի-
ները չէ կարելի չը յանձնարարել մեր թարգ-
մանիչներին և հրատարակիչներին: Պ. Լուսկին-
ի բաւական յայտնի է հայոց գրականութեան
մէջ. նրա ժողովրդական գրութեանը թարգ-
մանված են հայերէն լեզուով: Ճիշդ է, հայկական
հոտած չարակամութիւնը, որ ի մեծ դժբաղդու-
թիւն մեր կարողանում է ծածկել եւրօպական
պատկոյնը ցիլիկները տակ մի ժամանակ միջից կէս
էր դառնում: Ա. Լուսկինի տղէտ և անպէտք
մի գրող դուրս բերելու համար, բայց դա մի
յիմարութիւն էր, որը գործելու ընդունակ է
անձնական կրքերից դուրս և միտք կրքերած
հայր. ապացոյց հէնց այն, որ նոյն այդ հայկա-
կան հոտած չարակամութիւնը մեր ժամանակ,
երբ նրա մէջ երևի դեռ չէին գալարվում հրե-
շատոր կրքերը, ամենից շատ էր գովել: Ա. Լուս-
կինի ընդունակութիւնները: Ուրեմն, ամենայն
իրաւունքով կարող ենք անտես անել հոտած
չարակամութիւնը և ցանկալի, որ «Երեսնամե-
սե ժողովրդական գրադարանը» ամբողջովին թարգ-

գրականութեան մէջ աշխատողները գրութեան
առաջ, չեն կարողանում չը յիշել իմ վաղեմի
ձանձուր փորձերով իմ իմաստը: Իսկ ներկայից
ընթերցողներին ինքնութիւնների այս դա-
տակարութիւնը, այնքան այն փաստը, որ ի մա-
սին խօսում եմ, տրամադրում է մտաբերել աշ-
խարհ տեսած, ինչպէս համարվող վաճառական
փիլիսոփային Նրին, նա էլ ունէր դիտելու, մեր
հանրային հոգեբանութիւնը գծեր դուրս բերե-
լու ընդունակութիւնը: Նրին, նա իր խօսքերի
մէջ շատ ճիշդ էր ներկայացնում այն հասկա-
ցողութիւնները, որ ունի մեր ժողովրդը ան-
հատական գործիչների վրա: Այդ տեսակետից
չը կայ ոչ մի տարբերակ իրարմէ. մէկը հա-
րուստ է և սաստիկ ժպտ—ոչինչ, միւսը քա-
րէքար է ընկնում հասարակութեան օգտին մի
քան անելու համար—այդ էլ ոչինչ. թող ամեն
մէկը լինի այնպէս, ինչպէս որ է և մի ուրիշը
բոլորովին գործ չունի նրա հետ: Այսպէս է
անհատականութեան գաղափարով մնված հա-
սարակութիւնը. իսկ հայը իր պատմութեան
սկզբից երևան է եկել իբրև անհատական ձեռ-
քերով օժտված, բայց համայնական, ընդհանուր
ցեղական զգացմունքներից միանգամայն դուրս
մարդ: Նկատելի է, մէկը կարող է, խօսելով
ժողովրդական փիլիսոփայի լեզուով, մի շատ
օգտակար բանի վրա խնայելով լինել, բայց
մենք, լաւ իմանալով, որ խնայելով անըն-
ժել է, կամ ոչինչ չենք անել, կամ եթէ անենք
էլ, մեր արածը կը լինի 300 բուրդու մի նուէր
այն մարդուն, որ իւրաքանչիւր տարի իր և իր
ընտանիքի բերանից հազար բուրդի է կտրում
մի գրական ծառայութիւն մատուցած լինելու
համար...

Ն. հարց է՝ միշտ հարաւոր կը լինի, որ ան-
հատ իւր օգտակար խնայելով շարունակէ:
Նմէ մեր մէջ կարելի է լինում տարին 1000

մանվի հայ ժողովրդի համար, այն ժողովրդի,
որ ունի անհատական արձաններ պահանջող
շատ տափակ գլուխներ, բայց գլուխ է համետ,
ընդունակ և աշխատասէր մշակներին...

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԵՐ (Նամակ հաւաքից)

Կառավարութիւնը տուել է գիւղական հասա-
րակութեան կարողութիւն անմիջապէս հակել իր
գործերի վրա: Ընտրողական սկզբունքը իրաւունք
է տալիս գիւղացուն ընտրել իր բոլոր հասարակա-
կան պաշտօնեաներին: Տանուտէր ու նրա օգնա-
կան, չինական դատաւոր ու գրագիր, բոլորը ըն-
տրվում են հասարակական ժողովում: Բայց մեր
գիւղացին այնքան անհոգ ու թեթեւ է վերա-
բերվում դէպի այդ ընտրութիւնները, որ շատ
անգամ ինքն իր գլխին պատիժ է վատարկում:
Հասարակական պաշտօնեայ ընտրվում է նա,
ով շատ զինամիտքն ու պարտաւարական ունի,
կամ նա, որին իրանց անձնական շահերի հա-
մար առաջ են մղում մի քանի յայտնի տուղեր:
Ընտրելով մտածում է միայն պաշտօնի ար-
դիւնատութեան մասին, առանց դիտելու իր
կողմը կամ թէ ինչ պէտք է անէ ինքը: Մէկը
հրաժարվում է տանուտէր ընտրվելուց, բայց
առաջարկում է իրան չինական դատաւոր ընտ-
րել, որովհետեւ վերջինիս «դեպքերը» (եկամու-
տը) իր կարծիքով աւելի շատ է, թէ և տա-
նուտէրն էլ, դատաւորն էլ ունի չին ստանդարտ:
Իսկ գրագիրը, հասարակական գործերի այս իս-
կական կառավարիչն ու ղեկավարը, ընտրվում
է նա, ով մի քանի կօպէկ պակասով համա-
ձայնվում է լինել: Ս. այդ մարդիկը, իրանց
նշանաբան ընտրելով լոկ նիւթական շահը, սե-
փական գրպանը, դուրս են գալիս հասարակու-
թեան գործերը ղեկավարելու, ժողովուրդը կա-
ռավարելու:

Տանուտէրը և չինական դատաւորները ունի
չին ստանդարտ, ուստի և իրագոր իրաւունք են
համարում «կողմնակի» ճանապարհներով վար-
ձաբերել իրանց: Աղքատ գիւղացիներից մինը
ինչ որ հողաւորն է՝ չէ ունի չինական դատաւոր-
նում իր հարուստ դրացու հետ: Գործը ամիս-
ներ է տևում: Հարուստ հակառակորդը ճախա-
պարտաւորում է դատաւորներին և խնդրում
«միջոցաւոր» անել (անուշաղիթ թողնել) այդ
գործը, իսկ ինքը շարունակում է օգտվել ինքից
գիւղացու հողով: Գանդառաւորը մի քանի ան-
գամ դիմում է դատաւորներին: «Ախր, սիւ-
ղիս աղա, իմ գործս ինչ եղաւ:—Ե՛հ, գա՛նա
տարաբ, ինչ ես տուել—ինչ կուզես: Ի՛նչ
անէ, ո՛ր դիմէ գիւղացին: Բողբուլուց նախ
վախենում է, որովհետեւ իր հողին միշտ նրանց
ձեռքին է, իսկ եթէ ճարը կտրված ուղեւայ էլ
բողբուլ, չէ որ ինչիդ պէտք է գրել տալ, որը

մեծադիր երեսները կազմված մի գրական աշ-
խատութիւն տալ, ով պիտի պահպանէ այդ
գործը շարունակելու եռանդը: Ընթերցանու-
թիւնը անգնում շատ չէ տարածված, հայ գրքը,
հայ լրագիր պահպանող հասարակ դասակարգն
է, որ չէ կարող մի «Ազգագրական Հանգէս»
համար կօպէկներ տալ այնպէս, ինչպէս տալիս
է մի ժողովրդական փորձի, էժանագին և հան-
րաժանելի գրքի համար: Հայապ ով պէտք է տալ:
Ս. ինչում եմ մեր գրականութեան անցակը
և իմ առաջ երևան են գալիս մի շարք խոշոր
փաստեր: Ինչպէս պիտի կարողանային Վենե-
տիկի Միլիթարեանները լուս հանել իրանց հո-
յակապ «Հայկազեան Բառարանը», բաղկացած
2000 մեծադիր մանրատառ էջերից, ինչպէս
պիտի փորագրէին աշխարհագրական գեղեցիկ
քարտէզներ և հրատարակէին մատենագրու-
թիւններ, եթէ չը լինէին Տիւրքմանները: Ուղեւի
«Հայկազեան»-ը և «Պատմութիւն Հայկազե-
ան»-ը աշխատութիւնների թարգմանութիւնը,
բաղկացած 12 հատորից, չէր իրագործվի, լուս
չէր տեսնի, եթէ հնդկահայ հարուստները չա-
մուէլ Մուրադ մի խոշոր գրադարանի տուած
չը լինէր Միլիթարեաններին յատկապէս այդ
նպատակով: Վերջից ուրիշ մեծամեծ աշխա-
տութիւններ—Ինձինքանի «Հայկազեան» (ե-
րեք խոշոր հատոր) և դուք կը տեսնէք, որ ա-
մեն մէկի վրա նշանակված է մի անուն, որ
մեկնաստ է հանդիսանում, որ տուել է առանց
խնայելու: Սարգիս վարդապետ Թեոդորեանը
չորս հազարի հատոր է տպագրել մի բնիկ Նա-
րեքեանի հաշուով և դուք զարմանում էք մեկն-
նասի այդ յօժարակամութեան, առատաձեռնու-
թեան վրա, որովհետեւ Թեոդորեանի չորս հա-
տորների մէջ պիտանի նիւթերի հետ շատ և
շատ են աւելորդութիւնները, որոնք առնուազն
երկու հատոր (մօտ 1200 երես) կարող էին պա-

իր ընտրած հասարակական գրագիրը, իբրև նոյն
«սիւրիս աղաներ» ընկեր, չի գրի, իսկ քաղա-
քի բարեխիղճ գրագիրներն էլ Աստուած գիտէ,
թէ ինչ կը նստացնեն մի ինչից ինչից գիւ-
ղացու վրա: Հարահառաւ, ինքն էլ իր բերա-
նից կտրելով, իր ունեցած-չունեցածից սկսում
է բաժին հանել «աղա-սիւրիսներ» միմեյն, որ
իր գործը «եօլա տանի»: Անցնում են ամիսներ,
նոյն-իսկ տարիներ. մի օր էլ այդ «աղա-սիւ-
րիս» դէմքը ծածկելով (իբր ցաւակցելով)
յայտնում է. «Օղորդ, ինչ արի չեղաւ, ընկերներս
(միւս դատաւորներ)» չէ խօսաց գալու բան
չեն, թարգմտել գիւղական, բարբառները
Այն ինչ «ընկերներն» էլ հակառակորդին են
կորցում ու իրար մէջ բաժանում: Անկիթ, ան-
փող գիւղացին ակամայից հայտնում է բախտի
հետ, կարծելով թէ այդ է օրէնքը, հրաժար-
վում է իր արիւն-քրտինքով մշակած սեփական
տնութիւնից:

Մի հարուստ գիւղացի առաջարկում է իր
այրի հարեանուհուն ծախել իր տներին կից մի
կտոր հող, որի համար առաջարկում է ամե-
նապէս զին: Վերջինս չէ համաձայնվում. «Ե՛հ,
դու գիտես. ես իմ պարտքս պրծայ, էտե դու
կը փոշմիս, էտեկա ձեռքը չի անցնի», ասում
է հարուստ գիւղացին ու սկսում չինութիւնը:
Ինքը կիւրծ ուր գիմում է չէ լինում. ճարը
կտրված, առաւորը գցած իր 15 տարեկան որ-
դուն՝ դիմում է քաղաք գաւառապետին: «Ենեալ
զան», ոտմուղ մեռնեմ, դառն ունէի իւրաքանչեւ
(տանուտէրի օգնական) տուի, ոչխարս ալ գա-
վան (տանուտէրը) կերաւ, բան չերաւ, ինձի
աղաւթն ալ բոլորական կրակէն (հարստահա-
րից):»

Ահա թէ որքան ընդհանրացած է մեզանում
կաշառակերութիւնը ու ժողովուրդն ընտելացած
այդ բանին, որ միամիտ կիւրծ գառն ու ոչխա-
րը տանուտէրին ու օգնականին ուտեցնելուց
յետոյ, կարծում է թէ օրէնքն այդպէս է պա-
հանջում:

Ել չեն յիշում տանուտէրների ու չինական
դատաւորների օգտաներում ստացած եղբիւրց
պատիւները, որ դրեթէ ամենօրեայ երևոյթ է:

Տգէտ պաշտօնէի համար իր մեծ փորձ ու
լայն գրագիրից դուրս ոչ մի բան դոյութիւն
չունի, ուստի նա հէնց դրանք ամսին էլ մտա-
ծում է: Բայց դարձանում է մեզ հասարակա-
կան գրագիրների կատարած զղծումները: Գրա-
գիրները, որ շատ թէ քիչ կրթված ու ուսած
մարդիկ են, փոխանակ բարեխիղճօրէն ծառայե-
լու իրանց կոշմանը, իրանք և միմեյնում են
տգէտ տանուտէրների ու դատաւորների հետ ու
կեղեքում: Հասարակութեան բոլոր վարչական
գործերը կառավարում է իսկապէս գրագիրը:
Տանուտէրը մեծ մասամբ կրում է միայն պաշ-
տօնական նշանն ու լուս ներկայ լինում իր
գրագիր պաշտօնավարութեանը: Ինչպէս չեն կա-

կասեցին, եթէ դուրս գցվէին: Լազարեան հրե-
շակաւոր տոհմի ներկայացուցիչներից մէկը, կա-
մենակով հայ հասարակութեան մի բաւարան
տալ հայերէնից ուսուցիչ, ծախում է 25000
բուրլի և այդ առատաձեռնութեան շնորհիւ լոյս
է տեսնում Խուրաբաշեանի բառարանը երկու
հատորից:

Սրանք փաստեր են, որոնք ցոյց են տալիս
մեր հայրերի գործունէութիւնը: Մեր անցած
սերունդը, թէ և չին հասկացողութիւնների տէր,
թէ և ծնունդ մի ժամանակամիջոցի, երբ դեռ
նոր էր սկսում յարգ ստանալ գրագիրութիւնը,
հասկացել է, որ քաղաքացիութիւն է ոչ միայն
եկեղեցի, կամուրջ չինելը, աղբիւր հանելը, այլ
և Գուտենբերգի հնարած հրաշալի մեքենային
նիւթ տալը: Նիւնը ջուղայեցի վաճառականնե-
րին, որոնք Ամստերդամում, Լիվոնիոյ մէջ,
Վենետիկում, Պետերբուրգում տպարաններ էին
հաստատում, գրքեր էին տպագրել տալիս իրանց
հոգու փրկութեան համար. եթէ հայ մեկնա-
սը իր ձեռքը չը հասցնէր տպագրական արհես-
տին նուիրված մարդկանց, ինչ կը լինէր սրանց
գրութիւնը օտար աշխարհներում, երբ նրանք
յանձն էին առնում ամեն տեսակ տանջանք՝
այնպէս տառեր փորագրել տալու, հայերէն
գրքեր չարելու և տպագրելու համար...

Հեռու չը գտնուէր Այսօր հայ գրականութիւնը
նոյնպէս կարօտ է աշխարհային հայրան, նշանակա-
ւորութեան, բայց այսօրվայ հայ
կրթասեր նման չէ իր նախահայրերին ոչ միայն
հարստութեան չափի կողմից, այլ և մեկնաստու-
թեան կողմից: Կարելի կայ, բայց նրան հաս-
կացողները այլապէս են: Տիւրքմանները, Լա-
զարեանները, Մամուլի Մուրադները, դարձան
խօսելով իմ ծանօթ վաճառականի լեզուով,
խնայելով էին հրատարակութեան վրա, իսկ
այժման կրթասերների խնայելով մեկված է
այնպիսի չեքտերի վրա, որոնք յաւիտեան ոչ

րող անել մեր գրագիրները, եթէ միայն ուղե-
նան ու հասկանան, որ լոկ փողը մէջ չէ ամ-
փոփում մարդու կեանքը, մարդը ունի և բա-
րոյական կեանք: Միթէ նրանք չեն կարող ան-
ձահարել անուս պաշտօնեաների օրինադանու-
թիւնները, հասկացնել նրանց իրանց պաշտօնի
սրբութիւնը, կամ միանալով գիւղական ուսուց-
չի հետ՝ անցնել հասկացող երիտասարդութեան
գլուխն ու մաքառել հասարակական շարքերի
դէմ:

Բացի յիշեալ պաշտօնեաներից, իւրաքանչիւր
գիւղ իւր ներքին զանգան գործերի համար
ընտրում է հատաւարաւորներ, որոնց յան-
ձնում է, օրինակ, հանդերի պաշտպանութիւնը,
վնասված ցանքերի գնահատութիւնը և այլն:
Այդ մարդիկ ամիսներ շարունակ ծառայում են
հասարակութեան առանց մի կօպէկ վարձ ստա-
նալու, դրա համար էլ կամ ոչինչ չեն չինում
կամ, մոռացած խիղճ ու օրէնք, աշխատում են
լոկ իրանց գրպանի ու որդիքի օգտին: Ստեփա-
նի ոչխարը կերել է Կուրդինի արտը, վերջինս
խնդրում է գիւղի ընտրած հատաւարաւորնե-
րին գնահատել իր վնասը, որպէս զի կարողա-
նայ պահանջել: «Ե՛հ, աղա, էդոր համար մէկ
վել պիտի էրթայ, տոր հն, բանմա չէ եղել,
մենք էնօր տեսանք», ասում են «գործունեայ»
պաշտօնեաներն ու չիտակ ուղղվում դէպի Ստե-
փանի տունը: «Ենեման» (պատիժ) քաշել տա-
լու, որը շատ անգամ մի-մի բաժակ արաղից
չէ անցկենում:

Միթէ աւելի լաւ չէր լինի մի որոշ վարձ
տալ այդպիսիներին ու բարեխիղճ գործ պա-
հանջել: Գրանով հասարակութիւնը չի անա-
կանալ: Կարգ, կանոն և հաշուետւութիւն մըցո-
նելով, գիւղական հասարակութիւնները կարող
են արդարացի կառավարութեան կողմից նը-
րանց տուած բարեխիղճութիւնը:

Հաւաքից

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նրկ, նոյնքերի 25-ին, մենք ուղարկեցինք
Մօսկվայի համալսարանի վարչութեան հա-
րիւր քան բուրձ, որպէս զի այդ դուռնա-
բաց լրացվեն այդ համալսարանում գտնվող չը-
բաւոր հայ ուսանողների ուսման վճարի ապա-
ռիկները: Առիթից օգուտ ենք քաղում յայտնե-
լու այն ուսանողներին, որոնք դիմում են մեզ
օգնութիւն խնդրելու, որ մենք անկաշող ենք
գումարներ ուղարկել առանձին անձանց և կա-
րող ենք գործ ունենալ միայն դպրոցների վար-
չութեան և նպատաւատոյց կօմիտեաների հետ,
որոնց և կարող են դիմել ուսանողները:

Մեզ հաղորդում են, որ Կախէթի այգեգործ-
ների ժողովը, որ բացվեց Թեւաւ քաղաքում
նոյնքերի 20-ին, դրուել էր մասնակիցների

մի կապ չեն ունենալ Գուտենբերգի գիւտի
հետ: Որոնցեք այդ չեքտի մէջ կատարի չուայ-
տութիւն, հաճոյքների, փափկակեցութեան
նուրբ, շատ նուրբ, հիւանդաբանի դրոյթեան
հասցրած ճաշակներ և պահանջներ, որոնցեք
գրամը իբրև այլադակութեան հիմք, իբրև տը-
մարդի բնահաճոյքների պատուար, բայց մի ո-
րոնքը գրական, հիմնաւոր, լուրջ մի ձեռնար-
կութիւն: Միում են աղքատ, յանդուգն մար-
մերունդը, թէ և չին հասկացողութիւնների տէր,
դիկ, որոնք հաւա-հաւ են երևան գալիս, որոնք
չեն վախենում մեր ժամանակի կեանքի լօգի-
կայից և ուղում են անպատճառ ապացուցանել
թէ միանգամայն ճիշդ էր դատում փիլիսոփայ
ժպտը, ասելով որ գրագէտն էլ գրքի վրա է
խնայելով: Մի այդպիսի «խնայել» երկէ, ան-
ցաւ օրը թողեցին Սրեանում—Միմեյն Գու-
լամիթեանցին: Ն. կարծում էք թէ նա կը հա-
կացվի իբրև բողոք հասարակական անարարե-
րութեան դէմ, կարծում էք թէ նա սիրտ կը
շարժէ, մտածել կը տան, Միմեյն մի լինէր:

Գուցէ գրքերի վրա խնայելով չափաւոր
ամբողջ դժբաղդութիւնը այն է, որ նրանք հա-
մեստ են, չեն ուղում հրապարակել զղբեցնել
անձնագրութեամբ, չեն կարող իրանց բերա-
նով իրանց հոգակել մեծ գործիչներ, փրկու-
թեան խաբիսներ... Գուցէ նրանց մէջքի վրա
ծանրացած բեռն պատճառն այն է, որ նրանք
անպատու են համարում դռներ ծնծել, շո-
ղորդութեան լեզու քաղչ զուր հարուստների
պապուկ յատակների վրա, երես պղծացնել,
զօռով զլնել մի բան լացով, պաղատանքով...

Ով գիտէ:
Բայց եթէ այսպէս է իրողութիւնը, այն ժա-
մանակ աւելի վատ: Կեանքը—խօսքը, ի հարկէ,
գրական կեանքը մասին է—գրամաներ կը ստեղ-
ծէ:

Լ.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.